


ՓՈՐՁ

ԱԳԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄԻԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.
ՓԵՏՐՈՒԱՐ.



ՏՓԻՍ
1879.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻ, գրեաց ԾԵՐԵՆՅ՝ Կ. Պօլիս, տպագրութիւն Արամեան,
1878, Գին 2 Քրանք:

Բանաստեղծութիւնը գեղարուեստների թագն ու պսակն է: Իւր ծագումն առնելով Արևելքի խորքից, բանաստեղծութիւնը հետզհետէ ծաղկեցաւ ու զարգացաւ, և այս զարգացման մէջ նա ձեռք ձեռքի տուած գնաց մարդկային ազգի պատմութեան հետ: Արևելքում և գլխաւորապէս Հնդկաստանում առաջին անգամ թափառական որսորդն ու հովիւը երկրագործական կեանքի դիմեցին և ընկերական ու պետական յարաբերութիւնների հետ՝ կրօնի, զիտութեան ու գեղարուեստների առաջին հիմունքը դրին. այնտեղ մարդուս նիւթական ու բարոյական ձգտումները առաջին գարկը ստացան, և երևակայութիւնը առաջին անգամ ցոյց տուեց իւր ստեղծական զօրութիւնը, աշխատելով շօշափելի կերպով պատկերացնել բնութեան հրաշալիքը կամ արտայայտել մարդկային հոգու նորածին գաղափարները: Արևելքի բանաստեղծութեան ընդհանուր բնաւորութիւնը, իբրև մարդկութեան մանկական հասակի բնական հետեանք, նորանումն է պարունակվում որ նիւթն ու ձէր անդադար իշխում են հոգու ու գաղափարի վրայ, ուրիշ խօսքով, բնութեան երևոյթների արտաքին կողմը տակաւին արգելք է լինում նոցա ներքին բովանդակութիւնը ըմբռնելու. աշխարհը իբրև մի հանելուկ է ներկայանում մարդուս թոյլ խելքի առաջ, որ չկարողանալով նորա բազմատեսակ առարկաների խորը թափանցել, ակամայ հրաշալի պատկերների ու խորհրդաւոր ձևերի է դիմում, որոնք ըստ ինքեան աւելի վարագուրում, խաւարով են ծածկում նորան: Նորանից են առաջ գալիս նախնական յիշատակարանների ահագին մեծութիւնն ու ան-

հեղեղութիւնը, գոյների շոյալութիւնը, աւերորդ շատախօսութիւնը և մակդիրների չափազանց առատութիւնը: Այսպէս, հին հնդկացին դերագոյն էակի ամենակարողութիւնը արտայայտելու համար՝ բազմաթիւ ձեռքեր է տալիս նորան. այսպէս դարձեալ հին եգիպտացին, երկրաւոր կեանքի կարծասեւութիւնը աչքի առաջ ունենալով և միւսնոյն ժամանակ մարդկային հոգու անմահութիւնը մութ կերպով ըմբռնելով, անհազին բուրգեր է կառուցանում, որոնք դարերի կործանիչ զօրութեանը պիտի դիմադրէին: Յիշենք նոյնպէս մեր առաջին իշխաններին, որոնց հին հայի երեակայութիւնը ոչ իբրև սոժորական մարդի՛, այլ իբրև գերբնական էակներ, «անհեղեղ, յաղթանդամ և վիթխարի հսկաներ» է ներկայացնում, և նոցա զեղեցկութիւնը արտայայտելու համար՝ «հուրհեր կամ խարտեշահեր, գունեան, մեղուակն, անձնեայ, թիկնաւէտ, առոյգաբարձ, զեղեցկոտն» և սոցա նման մակդիրներ է տալիս: Մարդկային ստեղծագործութիւնը այս բնաւորութիւնը ստացաւ վառ երեակայութեան ազդեցութեան ներքոյ, որ միւս հոգեկան կարողութիւնների վրայ իշխելով՝ մի խորհրդաւոր ուղղութիւն տուեց բոլոր զեղարուեստներին. և ահա այս ուղղութեան մէջ է երևում բանաստեղծութեան զարգացման առաջին աստիճանը:

Երկրորդ աստիճանը բանաստեղծութեան զարգացման մէջ ներկայացնում է յունաց և հռոմայեցոց բանաստեղծութիւնը: Այլադայի զեղեցիկ ու ներդաշնակ բնութիւնը բարերար ազդեցութիւն ունեցաւ յոյն մարդու ամբողջ կեանքի վրայ: Այդ բնութիւնը չճանրացաւ նորա վրայ, շտրկացրեց նորան իւր զարհուրելի ու անհեղեղ երեւոյթներով ինչպէս Արևելքում. ընդհակառակն, նա գրաւեց, զուարճացրեց նորան իւր զեղեցկութեամբ և մասների յարմարաւորութեամբ: Մեղմ ու անամպ երկինքը բաց էր անում յոյն մարդու առաջ հեռաւոր տարածութիւնը. սարերի կատարներից երևում էին նորան երկու երեք ծովերի շքեղ տեսարանները: Անձամբ ականատես լինելով բնութեան երևոյթների մէջ եղած ներդաշնակութեանը, նա չէր կարող չզնահատել իւրաքանչիւր առանձին առարկայի նշանակութիւնը. իւր սուր ու թափանցիկ խելքով նա ըմբռնում էր նորա բովանդակութիւնը այնքան որքան թոյլ էին տալիս նորան իւր սեպհական փորձերը. և այս բաւական էր արևելեան չափազանցութիւններից հեռու պահելու նորան իւր արուեստական արդիւնքների մէջ: Սորանով է մեկնվում այն զարմանալի ներդաշնակութիւնը որ թաղաւո-

բում է հին յունաց գաղափարների և այդ գաղափարները արտա-
յայտող արդիւնքների մէջ: Յոյն բանաստեղծը իւր հերոսին այնքան
զօրութիւն է տալիս՝ որքան հարկաւոր է նորան իւր ձեռնարկած
գործը կատարելու: Քանդակագործը իւր արձանին այն ձևն է տալիս
որ հարկաւոր է նշանակեալ հոգեկան դրութիւնը կամ կիրքը ար-
տայայտելու: Այստեղ ամենևին չէք հանդիպիլ անտեղի չափազան-
ցութիւնների, այլստեղակ ձևերի կամ անմիտ յափշտակութիւնների,
ամէն տեղ երևում է ճիշտ նմանութիւն բնութեան, պատշաճաւո-
րութիւն ամբողջի ու մասների մէջ, կատարեալ ներդաշնակութիւն
արտաքին բացատրութեան և ներքին բովանդակութեան — ձևի և գա-
ղափարի մէջ:

Հռոմայեցոց բանաստեղծութիւնը յունականի ազդեցութեան
ներքոյ զարգացաւ, և այս պատճառով մեծ նմանութիւններ ունի
նորա հետ. բայց կատարեալ հելլենական գեղեցկութիւն չէ կարելի
գտնել այստեղ: Այս բանի պատճառը որոնելու է Հռոմի պատմական
բազդի մէջ: Հռոմայեցիք, իբրև քաղաքական ազգ, ոչ այնքան կեանքի
արուեստական կողմի վրայ էին մտածում, որքան զանազան հպատակ
ազգութիւններից մի կարգաւորեալ պետական մարմին կազմելու վրայ:
Այս գործնական ուղղութիւնը պահանջում էր աղմկայոյզ կրքերը
ըսպել. հռոմայեցին յոյնի նման չէր յափշտակվում, նա չէր
ձգտում ամէն մի հոգեկան շարժողութեանը գեղեցիկ բացատրու-
թիւն տալ. նա ամէնից առաջ քաղաքացի էր և հրապարակական
ասպարիզում գործող անձն: Այս է պատճառը որ հռոմայեցու լե-
զուի մէջ մի տեսակ հանդարտութիւն ու ազնուութիւն է տիրա-
պետում. նորան ոչ այնքան խօսքի գեղեցկութիւնն է գրաւում
որքան ճշտութիւնը. եւ ահա այն յատկանիշ բնաւորութիւնը
որով հռոմէական բանաստեղծութիւնը որոշվում է յունականից,
չնայելով որ երկուսն էլ ազգակից են միմեանց և միևնոյն ընդհա-
նուր օրէնքին են ենթարկվում — ձևի ու գաղափարի մէջ եղած ներ-
դաշնակութեանը:

Դասական կեանքի անկմամբ և քրիստոնէութեան ազդեցու-
թեամբ եւրոպական ազգերի մէջ երևան է գալիս միջնադարեան ու
մանական բանաստեղծութիւնը, ուր արտաքին բացատրութեան ու
ներքին բովանդակութեան մէջ եղած ներդաշնակութիւնը խորտակ-
վում և հոգին ու գաղափարը բոլորովին իշխում են նիւթի ու ձևի
վրայ: Քրիստոնէութիւնը ռոմանական ու գերմանական ցեղերի առաջ

մի բարձր բարոյական գաղափար դրեց, որին հասնելու համար մարդ պէտք է մրցէր աշխարհային կրքերի դէմ և այդպէսով քրիստոնէական բարոյականութիւնը հաստատէր ամէնօրեայ կեանքի մէջ: Այս նոր գաղափարը գործնական ու հողեօր կեանքի մէջ իրականացնելու փորձը փորձեց ասպետութիւնը, և սորա սխրագործութիւնների վրայ հիւսուած զրոյցները ռոմանական բանաստեղծութեան սկզբնական հիմն են կազմում: Շուտով ասպետութեան գործունէութեան մէջ երկու ուղղութիւն է առաջանում, ըստ այնմ և ասպետների վրայ կազմուած զրոյցները երկու որոշ ճիւղերի են բաժանւում՝ աշխարհային և հողեօր. առաջին շրջանի քերթուածների հիմը կազմում են ասպետների արկածախնդիր կեանքը, իսկ երկրորդ կարգի զրոյցները ներկայացնում են նոցա տժգոհութիւնը ներկայից և ձգտումը դէպի մութ ապագան, դէպի հրաշալին ու գերբնականը:

Այս ուղղութիւնը բանաստեղծութեան մէջ տիրապետեց մինչև միջին դարերի վերջերը, երբ եւրոպական ազգերի կեանքի մէջ սկսում են նոր կարգեր երևիլ: Աւատականութիւնն ընկնում է և ժողովրդեան միջին դասը զօրանում. կեանքի նոր յարաբերութիւնները որոշելու համար՝ հարկ էր հին կրթութեան դիմել, որի արդիւնքները համարեա բոլորովին մոռացութեան էին տուած: Այս երևոյթները գլխաւորապէս Ֆրանսիայում տեղի ունենալով, բնականաբար նոյն ժամանակի բանաստեղծութիւնը պիտի բաժանէին հեռացնէին միջնադարեան գաղափարներից, և այսպէսով յիշեալ երկրում երևան եկաւ մի նոր ուղղութիւն—կեղծ-դասականութիւնը (pseudo-classicisme): Նոր դասականութեան պաշտպան հանդիսացաւ ժամանակակից Ֆրանսուա Ա Վալուա թագաւորը. նա զօրաւոր կերպով նպաստեց հռոմէական դասընտիր մատենագրների ուսումնասիրութեանը, որպէս զի այդպէսով իւր ժամանակակիցների յիշողութիւնից ջնջէ միջնադարեան աւանդութիւնները, որոնք միապետութեան համար վտանգաւոր էին, և Ֆրանսիական ազգի կրթութիւնը հին հռոմէական աշխարհի կրթութեան հետ կապէ: Պալատի ազդեցութեամբ կազմուեցաւ մի ուսումնական ընկերութիւն, որ մեծամասութեամբ «Ֆրանսիական համաստեղութեան» (la Pleiade française) անունն առաւ իւր վրայ և որի շնորհով Ֆրանսիական գրականութիւնը հետեւողական բնաւորութիւն ընդունեց: Այդ ժամանակներից սկսած բանաստեղծութիւնը աւելի սառն դասողութեան քան ազատ ստեղծագործութեան արդիւնք համարուեցաւ. բանաստեղծների գլխաւոր

նպատակն էր իրանց արդիւքների մէջ յոյն Արիստոտէլի և լատին Ռատիոսի գրուածներից հանած օրէնքներին հետեւիլ, չմտածելով ամենևին թէ ինչ որ մի ժամանակ իրական կեանքին համաձայն՝ ուրեմն և գեղեցիկ ու ճշմարիտ էր, նոր ժամանակների համար բոլորովին ծուռ ու թիւր էր: Աեղծ-դասականութիւնը, որի գլխաւոր արժանաւորութիւնը ձևի, արտաքին բացատրութեան մէջ է սպարուհակում, իւր ազդեցութիւնը ասրածեց ամբողջ Աւրոպայի վրայ:

Սակայն չնայելով այս ընդհանրական ազդեցութեանը, դասականութիւնը յաւիտեան չէր կարող տեւել: ԺԸրդ դարու եւրոպական ընկերութեան ցաւալի վիճակը և նոյն ժամանակ տեղի ունեցած քաղաքական յեղափոխութիւնները ծանր տպաւորութիւն գործեցին ժամանակակիցների հոգու վրայ: Ամենալուսաւորեալ ու յառաջադէմ անձինքը սկսան կասկածել այն քաղաքակրթութեան վրայ որի շնորհով այնքան զեղծմունքներ էին մտել մարդկանց մէջ և կարծել թէ բուն երջանկութիւնը միայն նախնական պարզութեան մէջ կարելի է գտնել, երբ մարդ բնութիւնից անբաժան՝ նահապետական կեանքով է ապրում: Այս ծայրահեղ հայեացքի ազդեցութեան ներքոյ՝ բանաստեղծութիւնը աշխատեցաւ գեղջկական պարզ կեանքի իդէալները ներկայացնել. ուշադրութիւն չդարձնելով ժամանակակից պիտոյքներին, բանաստեղծը ձգտեցաւ անջատել հեռացնել մարդուն ժամանակակից գաղափարներից և առանձնացնել նորան ընտանեկան կեանքի շրջանում, և այստեղ նորա ամբողջ գործունէութեանը այնպիսի գողտրիկ ու գորովական ուղղութիւն տուաւ որ մինչև անբնականութիւնն է հասնում: Այս ուղղութիւնը թէև երկար չտեւեց, բայց և այնպէս նշանաւոր ներկայացուցիչներ ունեցաւ՝ Ժ. Ժակ Բուսօն և Բէրնարդէն դը Վէն-Պիէրը Ֆրանսիայում, Ռիչարդսընը և Օլիվեր Գոլդսմիտը Անգլիայում, Գէօթէն Գերմանիայում:

Ֆրանսիական յեղափոխութիւնը, այս մեծ ու վսեմ փորձը մարդկանց մեծագոյն մասը փոքրագոյն մասի դարեւ որ ճշնողութիւնից ու հարստահարութիւնից ազատելու, մի նոր դարազլուխ բաց արաւ մարդկութեան համար, յուսոյ ու երջանկութեան դարազլուխ. բայց միևնոյն ժամանակ նա ծնունդ տուաւ մի անտանելի դիկտատորութեան, որ թէև կարճատեւ կեանք ունեցաւ, այնու ամենայնիւ մեծապէս ծանրացաւ ազգերի վրայ: Նստոյէտն Ա իւր աշխարհակալական ձգտումներով եւրոպական ժողովրդների ազգայնութեան զգացմունքը վերաւորեց. իւրաքանչիւր ազգ ներկայի մէջ միսիթարութիւն

չգտնելով, աչքերը դարձրեց իւր անցեալի վրայ, սկսաւ հետապօսել միջնադարեան կեանքը, և այդ կեանքի մէջ յոյս ունէր գտնել մի իդէալ, որով կարողանար ժամանակակիցների վհատած սրտերը սփռփել: Ահա այսօր: Ը ծագեցաւ բանաստեղծութեան մէջ նոր-ու-ու մանական ուղղութիւնը, որի ներկայացուցիչներն եղան Յրանսիա-յում Վիկտոր Հիւգօն, Անգլիայում—Բայրընը, Գերմանիայում—Շիլլերը:

Ներկայ դարում բանաստեղծութեան մէջ մի ընդհանրական ձգտում է երևում խորշիկ հեռանալ անցած զնացած իդէալներից, որոնք այլ ևս գործադրելի չեն, և ներկայացնել բուն կեանքը առանց աւելորդ զարդարանքների: Բանաստեղծները աշխատում են մէկ կողմից անկեղծօրէն արտայայտել մարդու հոգեկան սրամադրութիւնները ժամանակակից գաղափարների ազդեցութեան ներքոյ, իսկ միւս կողմից մանրամասնօրէն քրքրում, քննութեան են ենթարկում արդեան կեանքի բազմակողմանի երևոյթները, որոնց ազդեցութեամբ մարդկային ընկերութեան մէջ այլ և այլ անբնական երևոյթներ կազմուել, այլ և այլ ախտեր են բուն դրել: Նորագոյն ժամանակների սաղանդաւոր հեղինակների ամենամեծ պարծանքն այն է որ նոքա շօշափելի կերպով ցոյց տուին մեզ ընկերական յարաբերութիւնների լոյր անբնականութիւնն ու վնասակարութիւնը: Նոքա իրանց բեղմնաւոր դրիչը նուիրեցին նկարագրելու բարձր դասերի զեղծմունքները և ստորինների անմխիթար դրութիւնը, կանանց մշակ ու երկրագործ դասերի անտեսական ու բարոյական թշուառութիւնը:

Ահա այս գլխաւոր աստիճաններից անցաւ բանաստեղծութիւնը իւր զարգացման ընթացքի մէջ: Ընթերցողը կարող է նկատել թէ ինչ ահագին տարբերութիւն կայ նախնական դարերի մէջ՝ երբ բնութեան երևոյթները իբրև մի մի խորհրդաւոր առեղծուածներ էին ներկայանում մարդու, և նորագոյն ժամանակների մէջ՝ երբ կեանքի բոլոր կողմերը պարզ ու որոշ կերպով հանդէս են բերվում զեղաբուենստական արդիւնքների մէջ: Բայց այս հեռանքին հասագրականութիւնը միայն արեւմտեան ազգերի մէջ, ուր պղպային կեանքը չնայելով զանազան խոչընդոտների, շարունակ առաջ գնաց և ուր բանաստեղծութիւնը աշխատեցաւ այդ կեանքը արտայայտել: Նոյնը չէ կարելի հարկաւ ասել այն ժողովուրդների համար որոնք այդ շարժողութեանը չեն մասնակցել և ուր կեանքն ու գրականութիւնը սերտ կաճ

պով կապուած չեն եղել: Այս պայմանի մէջ է գտնուել և հայ ազգը: Լուսաւորութեան առաջին սերմերը, ինչպէս յայտնի է, քրիստոնէութեամբ բերուեցան Հայաստանի հողի վրայ, բայց այն այնպիսի ժամանակ՝ երբ հայերը իրանց քաղաքական անկախութիւնը կորցնելու վրայ էին, ուրեմն և մի մեծ արդիւնք էր կարելի սպասել նորանից ժողովրդի ընդհանրութեան համար: Նոր լուսաւորութիւնը առաջուան հեթանոսական կեանքի դէմ մաքաւելով քեց հալածեց նորան, բայց չյաջողեցաւ նորա տեղը բռնել: Ոսկի ասած դարու շարժողութիւնը տեղի ունեցաւ միայն մի նեղ շրջանի մէջ, որ քրիստոնէական զաղափարները տարածելու պարտաւորութիւնն էր յանձն առել, և այս պատճառով գրականութիւնն էլ խիստ կրօնական բնաւորութիւն ընդունեց: Ծշմարիտ է, ուրիշ ազգերի մէջ էլ է նկատվում միևնոյն երևոյթը. բայց բանն այն է որ այնտեղ, յաջող հանգամանքների շնորհով, կրթութեան շրջանը քանի զնաց ընդարձակուեցաւ, և գրականութիւնը ազգային կերպարանք ստացաւ: Մեզանում, դժբաղդաբար, մտաւոր ու բարոյական վերածնութիւնից անմիջապէս յետոյ եկաւ քաղաքական անկախութեան անկումը, որին հետևեցան անվերջ աղէտների ու տառապանքների դարերը, երբ եկեղեցին ու գրականութիւնը ազգային կրթութեան վրայ մտածելու ժամանակ չունէր, այլ իւր բոլոր բարոյական ազդեցութիւնը պիտի գործ դնէր անձնուրաց նահատակներ պատրաստելու կրօնի փրկութեան համար, որի հետ պինտ կապուած էր ազգի կեանքի ու մահուան խնդիրը:

Այս յուսահատական կռիւր ամենամեծ յամառութեամբ տևեց մինչև նորագոյն ժամանակները: Մինչ հոգեվարքի ծանր րուպէներն էին հասել, մինչ աշխարհի ամենահին ազգերից մէկը մ.թ. էր կարծես մահուան ցաւալի տեսարանը ներկայացնելու աշխարհին, յուսոյ աստղը աղօտ լուսով սկսաւ փայլել Հայաստանի երկնքի վրայ: Հայրենի աշխարհի փլատակների տակից երևան եկան զօրաւոր հոգիք, որոնք փորձեցին կրթութեան միջնորդութեամբ վերակենդանութեան կոչել մահուան դուռը հասած ազգին: Առաջնութեան պատիւն այստեղ ամենայն իրաւամբ տալու է Մխիթար Սեբաստացուն, նոր ժամանակների այս Մեսրոպ Մաշտոցին: Մխիթարը իւր միաբանութիւնը հիմնելով այն ժամանակ՝ երբ մենք դեռ տգիտութեան խաւարի մէջ էինք խարխափում, գլխաւոր նպատակ ունեցաւ յարուցանել մեր մէջ հին հայկական լեզուն ու գրականութիւնը: Նորա

առաջին բանն եղաւ զրոյ լեզուի բառգիրք ու քերականութիւն յօրինել, որոնք ազգային կրթութեան հիմը պիտի դնէին: Նորա յաջորդները իրանց հիմնադրի շաւղովը զնալով մէկ կողմից հայկական գրականութեան դասընտիր արդիւնքները հրատարակեցին, զանցառութեան տալով առ ժամանակ այն գրուածները որոնք եթէ իրանց բովանդակութեամբ ուսումնասիրութեան արժանի էին (այսպէս է մեր պատմագրական գրականութեան մեծ մասը), ընտիր լեզուի օրինակ չէին կարող համարուիլ, և միւս կողմից իրանց սեպհական արդիւնքների մէջ ձգտեցան Նզնիկների, Նղիշէների և ուրիշ դասընտիր մատենագրների ոճին ու լեզուին հաւասարուիլ: Մխիթարեանց այս գործունէութեանը մեծապէս նպաստեցին արեւմտեան ազգերի մէջ տիրապետած դասական գաղափարները. հայկական ու եւրոպական դասականութիւնները ձեռք ձեռքի տուին, և Սուրբ Ղազարու տպարանը բազմաթիւ ինքնագիր ու թարգմանական գրուածներ լոյս հանեց դասական լեզուով ու բովանդակութեամբ:

Մխիթարեան միաբանութիւնից այս հայեացքը տարածուեցաւ ազգի մէջ և բացարձակապէս իշխեց դպրոցի ու գրականութեան վրայ: Դեռ երէկ զրոյ լեզուով էր սկսում ու աւարտվում հայ մարդու կրթութիւնը, զրոյ լեզուով էին գրվում գիտնական ու բանաստեղծական արդիւնքները, մասամբ նաև պարբերական թերթերը: Նոյն իսկ ժողովրդական զուարճութիւնների ժամանակ, հարսանիքներում, խնջոյքներում, եկեղեցական հայրերի հոգեբուխ տաղերն ու մաղթանքներն էին երգվում խմբովին, և հազիւ էր պատահում որ մի որեւիցէ աշուղ իւր թոյլ ձայնը բարձրացնէր, չ'նգուրի ընկերակցութեամբ, կենդանի, խօսուն բարբառով երգելու քաջութիւնն ու գեղեցկութիւնը: Այն ժամանակ դժուար էր երևակայել թէ այդ կոպիտ ու անմշակ լեզուն դպրոցի ու գրականութեան միաբան գործակցութեամբ կարճ միջոցում իւր իրաւունքները պիտի ստանար, ընդհանուր հայութեան լեզու պիտի դառնար: Եւ սակայն այստեղ պէտք է որոնել մեր նոր լեզուի ու գրականութեան սկզբնաւորութիւնը: Աշուղները, այս թափառաշրջիկ երգիչները, այս համեստ հազներգուները՝ որոնցից ոմանց անուններն անգամ անձանօթ են մնացել, մեծ ծառայութիւն մատուցին մեզ մեր խեղճութեան ու թշուառութեան օրերում: Նորա իբրև ժողովրդական դաստիարակներ, բարոյական գաղափարներ տարածեցին մեր մէջ և իրանց տխուր երգերով, արդիւնք մեր տխուր կեանքի, յաճախ մխիթարեցին ու

խրախուսեցին հայ ժողովրդին. նոքա փրկութեան առաջին ճանապարհը ցոյց տուին մեզ և չնայելով որ նոցանից մեծ մասը հազիւ դրել կարգալ էին իմանում՝ յորդորեցին մեզ զիր, դաճթար ու դաւամ սիրել, վերջապէս նոքա կորուստից պահպանեցին հայ լեզուն այն ժամանակ երբ կարծես ամէն ինչ մահ էր սպառնում նորան և իբրև մի թանկագին սեպհականութիւն բերին հասցրին մինչև մեր ժամանակները: Այդ լեզուն էր որ Աբովեանների, Պէշիքթաշլեանների Պաշտանների և սոցանման տաղանդաւոր բանաստեղծների գրչի տակ կոհուելով որ ազնուանալով հետզհետէ թօթալեց կամ թօթափելու վրայ է օտարախորթ տարրերը, արգասիք մեր երկարատև ստրկութեան, և զգեցաւ ազգայնութեան կերպարանքը:

Ստեփաննի ներկայումս հայ լեզուն մի ուրիշ վտանգի առաջ է գտնվում, վտանգ որի առաջն առնելը ամենայն բանագէտ հայի սրբազան պարտաւորութիւնը պիտի լինի: Մեր նորածին գրականութիւնը օտար գրականութիւնների ազդեցութեան տակ կազմուելով, նոյն իսկ մեր կրթութիւնը—խօսքը բարձրագոյն ուսման վրայ է—օտար լեզուներով մատակարարուելով, մայրենի բարբառը անզգալի կերպով ենթարկուել է յիշեալ լեզուների ազդեցութեանը: Այդ ազդեցութիւնը թուլացնելու և լեզուն բնականութեան սահմանի մէջ պահելու ամենահաստատուն միջոցն է, ինչպէս ուրիշ անգամ էլ ասացինք, մշակել մի կողմից արդի գաւառական բարբառները, որոնք անգին գանձեր են պարունակում, և միւս կողմից հին գրոց լեզուն, որի գիտութիւնը նոյնպէս անհրաժեշտ է նոր բանասիրութեան համար: Կեղուի ամբողջութիւնը գիտնականօրէն մշակելուց, նորա գանձերը երևան հանելուց յետոյ, մնացած գործը կը կատարէ ազգային բանաստեղծութիւնը: Մեծ է արդարև բանաստեղծութեան կոչումը մեր նոր կեանքի մէջ. նա պիտի նպաստէ հետզհետէ լեզուն զարգացնելու և գրականութեան շրջանը ընդարձակելու՝ թէ մինը և թէ միւսը ժողովրդացնելով: Նա նիւթերը ազգային կեանքից առնելով, նա բնականաբար պիտի աշխատի բացատրութեան ձևերն էլ ազգային կեանքի մէջ որոնել, և այսպէսով ո՞ր չափով որ գիտութիւնը ժողովուրդն ու գրականութիւնը միմեանցից հեռու է պահում, նոյն չափով բանաստեղծութիւնը կը նպաստէ միմեանց մօտեցնելու նոցա: Փորձերը արդէն լինում են, և ներկան կարող է այստեղ մի փոքրիկ երաշխաւորութիւն լինել ապագայի համար:

Բայց առ այժմ մեր կեանքը զեռ այնքան աղքատ, այնքան

անսխիթար է՝ որ շատ քիչ նիւթ կարող է մատակարարել բանաստեղծութեանը: Հայը դեռ նոր է սկսում զարթել իւր երկար ժամանակեայ քնից, նոր է սկսում զգալ ու խորհել, իսկ գործելու համար դեռ բաւական յոյժ չէ գտնում իւր մէջ: Այս վհատութեան վիճակի մէջ բնական է որ հայ բանաստեղծները իրանց ոգևորութեան աղբիւրը որոնէին մեր անցեալի մէջ և նոյն կեանքի փառաւոր օրինակներով աշխատէին խրախուսել մեր լքեալ սրտերը: Նոյնը արել են համանման վիճակի մէջ գտնուած ազգերը: Խտաշիայի խեղճութեան օրերում, Դանտէից սկսած մինչև Ալֆիէրին ու Լէոպարդին, շատ բանաստեղծներ աշխատեցան անցեալի փառաւոր յիշատակներով հայրենասիրութեան կայծն արծարծել իրանց թմրած ու մեռած հայրենակիցների մէջ. յոյները Լէոնիզասների, Թէմիստոկլէսների, Պէրիկլէսների ժամանակները յարուցանելով պատրաստեցին իրանց երկրի բարօրութիւնը: Այսպէս և մեզանում, Ալիշան, Պէշիքթաշլեան, Հէքիմեան, Պատկանեան Պաօշեանցը և ուրիշները, իրանց արդիւնքների մէջ անցեալի յիշատակները կենդանացնելով և ներկայի խեղճութեան հետ համեմատելով, եթէ մէկ կողմից ջերմ արտասուքներ թափել տուին մեզ մեր այժմեան թշուառութեան վրայ, միւս կողմից յորդորեցին ու խրախուսեցին մեզ մեր հայրերին հետևող ու նմանող լինել և մեր բարոյական վիճակը բարւոքելու աշխատիլ:

Ուշադրութեան արժանի է որ մեր բանաստեղծները իրանց գաղափարները արտայայտելու համար մեծ մասամբ քնարին ու թատրոնին են դիմում: Նոցա գրուածները ընդհանրապէս մտնը քնարական հատուածներ կամ ողբերգական գրուածներ են: Վիպական բանաստեղծութիւնը, որ այնպիսի մեծ տեղ է բռնում նոր գրականութիւնների մէջ, շատ տարածուած չէ մեզանում, իսկ պատմական վիպասանութիւնը տակաւին մի անծանօթ դաշտ է ժիր մշակների աշխատութեան կարօտ: Այս վերջին տեսակի մէջ առաջին փորձը որքան մեզ յայտնի է ¹⁾, արաւ յարգելի պ. Մերենցը իւր «Թորոս Լևոնի» վիպասանութեամբ:

Քիչ դիրք կը պատահի որ «Թորոս Լևոնի» նման իւր ժամանակ

¹⁾ Այս կարգի վէպերից չենք համարում Մ. Թադեադեանցի «Վարդգէս Մանուկ», «Սոս և Սոնթիպի» և սոցա նման վիպասանութիւնները, որոնց նիւթը թէև հին կեանքից է առնուած, բայց բոլորովին ուրիշ ուղութեամբ ու նպատակով են գրուած:

նակին գրուած ու հրատարակուած լինի, և այս է պատճառը որ յիշեալ վիպասանութիւնը սիրալիր ընդունելութիւն գտաւ ընթերցող հասարակութեան կողմից: Հեղինակը իր իւր բուն անունը կեղծ անուն քողով է ծածկել, դիտաւորութիւն է ունեցել ներկայ տաղ-նապալից ժամանակում մեր ուշադրութիւնը Կիլիկիայի վրայ դարձնել և ցոյց տալ թէ ինչպէս անցեալի համանման պարագաներում Թորոսի հայրենասէր ու անվեհեր հոգին հայ ժողովուրդին կորստեան անդնդից ազատեց և վերակենդանութեան կանչեց: Նա կամեցաւ ցոյց տալ թէ ինչպէս մի ափ ժողովուրդ կարող է իւր ընկած տեղից բարձրանալ, որպէս հրաշքներ կարող է գործել նա, եթէ միայն կամք ու յօժարութիւն ունենայ Թորոսների ձայնը լսելու, նոցա գեղեցիկ օրինակին հետեւելու:

Չարմանալի անձնաւորութիւն է արդարև Թորոս Բ, որի կեանքի պարագաները որքան հետաքրքրաշարժ՝ նոյնքան և խրատական են մեզ համար: Վեոն Ա իւր երկու որդոց Ռուբէնի ու Թորոսի հետ Կոստանդնուպօլիս գերի տարուելուց յետոյ (1137), Ռուբինեանց նորահաստատ իշխանութիւնը բոլորովին ջնջուել և Կիլիկիայն մեծ մասամբ թուրք ու լատին իշխանների ձեռքն էր ընկել: Ռուբէնի անգութ սպանութեամբ և Վեոնի աղետալի մահուամբ փրկութեան յոյսը կարծես կորել էր, երբ առիւծի (Վեոնի) երկրորդ կորիւնը Թորոս իւր դահիճների սրատես աչքերից և մի յոյն կնոջ սիրոյ ցանցերից ազատուելով՝ հրաշալի յաջողութեամբ եկաւ մտաւ իւր հայրերի քրտինքով բռնած տեղերը (1145): Իբրև փախստական ու պանդուխտ, անոք ու անօգնական, միայն իրան սիրող ազնուական տիկնոջ դրամական ձեռնտուութեամբը նաւեց նախ Կիպրոս, այնտեղից մտաւ Կիլիկիա, յայտնեց իւր անձը մի քահանայի, որ փոքր ժամանակ իւր մօտ պահեց նորան իբրև ծառայ կամ հովիւ. յետոյ դիմեց մի հաւատարիմ ասորի եպիսկոպոսի, և նորանից ստացաւ մի ձի և տասներկու ընկեր, որոնց օգնութեամբ տիրեց Ամուտա բերդին և նորա վրայ բարձրացրեց ռուբինեան խաչանիշ գրօշը:

Թորոսի զալստեան համբաւը տարածուելով բազմաթիւ կորիճ հայեր եկան մտան նորա գրօշի տակ. եկան նոյնպէս Թորոսի երկու եղբայրները Ստեփանէ և Մլէհ, որոնք Նուբէտաին Հալէպի սուլթանի պալատումն էին ապրում: Կարճ միջոցում Թորոսի դունդը ստուարանալով 10,000 հոգու հասաւ: Այս քաջերի օղնութեամբ ձեռք ձգեց նա Վահկայ, Սիմանկալայ և Առիւծ բերդերը. յետոյ լեռներից

ու բերդերից իջնելով սկսաւ դաշտային տեղերի վրայ յարձակիլ, և հետզհետէ նուաճեց այն բոլոր քաղաքները որոնք երբեք իւր հօր Լեոնի իշխանութեան տակ էին գտնվում (1151): Այդ միջոցում Մանուէլ Աոմնենոս կայսրը հունգարական արշաւանքից վերադառնալով և Կիլիկիայի անցքերը լսելով իւր հօրեղբորորդուն Թեթեամիս ու զոռոզ Անդրոնիկոսին մեծ զօրքով ուղարկեց Թորոսին և նորա երկիրը նուաճելու: Թորոս Թշնամիների զօրութիւնը սեսնելով խոհեմութիւն համարեց պաշտպանողական դիրք բռնել, և ապաւինեցաւ Մամեստիայի պարսպների մէջ, որ յոյներն եկան ու պաշարեցին: Գժուար էր արդարև Թորոսի դրութիւնը. Թշնամու վրայ յարձակիլ չէր կարող, միւս կողմից երկար ժամանակ պաշարուած մնալն էլ անհնարին էր, որովհետև պաշարի բաւական պատրաստութիւն չունէր. ուստի սկսաւ Անդրոնիկոսի հետ բանագնացութիւն անել, խոստանալով որ կայսեր հաւատարիմ կը լինի, միայն թէ նա էլ ձանաչէ իւր իրաւունքները: Ամբարտաւան հռոմի միակ պատասխանն այն եղաւ, թէ Թորոս պէտք է անպայման անձնատուր լինի և իւր հօր շղթաներով կապուած կոստանդնուպօլիս տարուի: Այս բանի վրայ Թորոսը զայրացաւ, և մի անձրեւային ու փոթորկալի գիշեր, մինչդեռ Անդրոնիկոսը զինարրութեան ու անառակութեան անձնատուր էր եղած, քաղաքի պարիսպը ճեղքեց, զօրքովը դուրս եկաւ և յանկարծակի ընկնելով յունաց բանակի վրայ՝ մի մասը ջարդեց իսկ միւս մասը Անդրոնիկոսի հետ փախցրեց մինչև Անտիօքի սահմանները, և դարձաւ Մամեստիա հարուստ աւարով ու գերիներով, որոնց հետ յոյն մեծամեծների հետ մի քանի հայ իշխաններ էլ կային կայսեր կուսակից: Թորոսը հասարակ զինուորներին մերկացնելով արձակեց, իսկ պատուաւորներին թոյլ տուեց որ իրանք իրանց ազատութեան զինը որոշեն, աւելացնելով որ եթէ իւր աչքում մի արժէք ունենային՝ չէր էլ համաձայնիլ ազատութիւն տալ նոցա: Գռռոզ յոյները անձնանախատ չհամարուելու համար մէկը միւսից ծանր զներ նշանակեցին ու ազատեցան: Թորոս նոցա ներկայութեանը բոլոր դրամը իւր զօրքին բաժանեց, և երբ յոյները զարմացած նայում էին՝ «այս նորա համար եմ անում, ասաց նա, որ ուրիշ անգամ էլ ձեզ բռնեն»: Գերեալ իշխանների թվումն էր և Օշին Լամբրոնի տէրը, Ն. Ենորհայրու փեսան և Ն. Լամբրոնացու հայրը, որ 40,000 ոսկու ահագին փրկանագինը չկարողանալով միանգամից հատուցանել՝ կէսը ետուաւ, իսկ միւս կէսի ապահովութեան համար պատանդ տուաւ

իւր անդրանիկ չեթում որդին, որ դեռ փոքրահասակ էր: Պատանի չեթումը իւր բարեմասնութիւններով այնքան սիրելի եղաւ Թորոսին, որ սա Օշինի համաձայնութեամբ նշանեց նորան իւր դստեր հետ, և երկուսին էլ ուղարկեց Վամբրոն: Բայց այս քաղաքական ամուսնութիւնը, որ երկու իշխանական աների բարեկամութիւնը սպառնալու ապահովելու դիտաւորութեամբ էր յղացել Թորոս, բաղաւոր վախճան չունեցաւ: Թորոսի մահից յետոյ չեթում կամենում էր իւր հարսին արձակել, և միայն Մլեհի վրէժխնայութիւնից ստիպուեցաւ իւր դիտաւորութիւնը անկատար թողնել:

Անդրոնիկոսի անյաջողութեան լուրն առնելով՝ Մանուկ կայսրը դեսպանների միջնորդութեամբ և մեծագումար ընծաներով Իկոնիայի Մալսուտ սուլթանին զրդեց յորդորեց Թորոսի երկիրը ասպատակել: Երկու անգամ փորձեց Մալսուտ Վիլիկիա արշաւել, բայց երկու անգամ էլ Թորոսից ակնածելով յետ քաշուեցաւ. մինչև որ վերջապէս բիւզանդական ոսկիներից հրապուրուած՝ ահեղ բանակով մտաւ ոլորեց հայ երկրի դաշտերը: Անվհեր Թորոսը իւր հարազատ Սաւփանէի և Վատին ասպետների օգնութեամբ այնպիսի ջարդ տուաւ թուրքերին, որ դժբաղդ Մալսուտը հազիւ հազ կարողացաւ իւր երկիրը ապաւինել ահագին աւար թողնելով հայոց ձեռքը (1154):

Կայսրը երկրորդ անգամ խաբուելով իւր ակնկալութիւնների մէջ, մէկ կողմից Անտիոքի Վատին իշխաններին զրգուեց Թորոսի դէմ, իսկ միւս կողմից նորանոր զօրավարներ ուղարկեց նորա վրայ: Խոհեմ Թորոսը շտապեցաւ. հաշտութիւն խօսել փռանկ իշխանների հետ և նոցա դաշնակցութեամբ ընկաւ յունաց վրայ, որոնք Անդրոնիկոս Եւփորակնի առաջնորդութեամբ եկել Տարսոնը պաշարել էին, երեք հազար մարդ կոտորեց նոցանից, մնացածներին փախցրեց մինչև ծովեզր, ուր նաւ նստելով հազիւ կարողացան ապաստուիլ նորա ձեռքից:

Այս անգամ արդէն Բիւզանդիայի կայսրը վճռեց անձամբ գնալ Թորոսից վրէժ առնելու: 1158ին, ձմեռուան մօտ, մեծ նաւատորմով և բազմաթիւ զօրքերով ճանապարհ ընկաւ նա իրրե թէ թուրքերի վրայ գնալու: Թորոս որ անկասկած նստած էր Տարսոն, կայսեր մօտենալը իմանալով և իւր մօտ բաւական մարդ չունենալով, քաշուեցաւ լեռները, իւր ընտանիքը Տաճկի—քար ասած բերդի մէջ ապահովեց, իսկ ինքը մի ափ կործանելով անդադար մէկ տեղեց միւսն էր փոխադրվում, որ թշնամիների թակարթը չընկնի: Մինչ յոյները զբաղած էին Վիլիկիայի քաղաքները նուաճելու, Երուսաղէմի

Թագաւորը Բալլուին Կ, Թորոսի մտերիմ բարեկամը, միջնորդեց կայսեր առաջ և հաշտեցրեց նորան Թորոսի հետ, այն պայմանով որ Անարզաբա քաղաքը յունաց մնայ, իսկ Թորոսը Պանսեբաստոսի տիտղոսով իւր իշխանութիւնը անկասկած վարէ ամբողջ երկրի վրայ:

Այնուհետև շրջանկատ ու զգուշաւոր Թորոսը առանց մեծ ընտանութիւն ցոյց տալու յունաց՝ հաշտ ապրեցաւ նոցա հետ, մինչև որ բիւզանդական չարագործութիւնը առիթ տուաւ նորան իւր կապած դաշինքը լուծելու: Կիլիկիայի կայսեր տեղապահը, յիշեալ Անդրոնիկոս Եւփորպենը, Թորոսի եղբօր Ատեփանէին ճաշի հրաւիրելով, բարբարոսական անգթութեամբ եռեկած կաթսայի մէջ ձգեց ու խաշեց նորան (1163): Այս անլուր չարագործութիւնից զրգուելով և Հայերը Թորոսի ու Մլիհի առաջնորդութեամբ ընկան կիլիկեցի յունաց վրայ և, ըստ Միքայէլ Ասորի պատմագրի, տասը հազար հոգի կոտորեցին: Այս դէպքը մէկ կողմից, Թորոսի և Նուրէտափնի մէջ հաստատուած բարեկամութիւնը ուրիշ կողմից յունաց տանլութիւնը նորից արծարծեցին, և կայսրը Թորոսի վրայ հետզհետէ ուղարկեց Անդրոնիկոս Կոմնենոսին և Կոստանդին Կալամանին: Առաջինը մի քանի անգամ ջարդուելով հայերից, իւր նախատինքը ծածկելու համար փախաւ ապաւինեցաւ Անտիոք. իսկ երկրորդը այդ բաղձն էլ չունեցաւ, այլ Թորոսի ձեռքն ընկնելով կայսրը ստիպուեցաւ ծանր փրկանք տալով գերութիւնից ազատել նորան:

Ահա այսպէս անխոնջ Թորոսը քսան տարի շարունակ զէնքը ձեռին պատերազմելով տիրացաւ իւր հայրենի ժառանգութեանը և իւր յաջորդներին թողեց մի կարգաւոր տէրութիւն, որ շուտով թագաւորութեան աստիճանին պիտի բարձրանար: Բայց պատերազմի դաշտումը միշտ յաջող Թորոսը իւր մերձաւորների կողմից բաղդաւոր չեղաւ: Յիշենք նախ Սշին Լամբրոնի իշխանի հետ ունեցած հակառակութիւնը, որ բանը մինչև արիւնհեղութիւն հասցրեց և միայն Ն. Շնորհալու միջնորդութեամբ հաշտութեան ու բարեկամութեան փոխուեցաւ (1165): Յիշենք դարձեալ իւր երկու հարազատների անխոհեմ Ատեփանէի և անզուսպ ու մոլի Մլիհի անվայել ընթացքը, որի պատճառով Թորոսը ստիպուեցաւ առաջինին առ ժամանակ բանդարկել, իսկ երկրորդին իւր կեանքի դէմ լարած որոգայթի պատճառով մինչև երկրից դուրս հանել: Մեռաւ Թորոս 1168ին, քսանհինգ տարի փառաւորապէս իշխելուց յետոյ, և թաղուեցաւ Դրազարկ վանքում, որ իւր համանուն հօրեղբայրն էր կառուցել, և ուր

յետոյ շատ թագաւորներ և թագուհիք թաղուեցան Բուրինեան տանից:

Ահա այս է վերջին պատմական հետազօտութիւններին նայելով ¹⁾ Թորոսի կենսագրութեան համառօտադիժ նկարագիրը: Ընթերցողը թող ներէ մեզ եթէ մեր կամքի հակառակ ստիպուեցանք փոքր ինչ երկար կանգնել այս մեծ մարդու կեանքի պարագաների վրայ, մանաւանդ որ այժմ հարկ չի լինիլ մեր առաջ դրած վիպասանութեան բովանդակութիւնը պատմելու, որի ծրագիրը ընդհանրապէս յիշեալ հետազօտութեան վրայ է կազմուել: Մեզ կը մնայ միայն մի քանի խօսք ասել վիպասանութեան նշանաւոր անձանց բնաւորութիւնների ու յարաբերութիւնների վրայ:

Բիւզանդական կայսրների մայրաքաղաքի գեղեցիկ նկարագրութիւններից յետոյ, հեղինակը մեր առաջը բերում է իւր վիպասանութեան երկու գլխաւոր հերոսներին, մի քսան քսաներկուամեայ երիտասարդ և մի տարիքով մօտ յիսնամեայ մարդ: Երիտասարդը ընթերցողին ծանօթ Ղևոնի որդին Թորոսն է, որ Մանուէլ Կոմնենոս կայսեր ներկայանալով բանդի կապանքներից արձակվում, լոյս ու արև տեսնելու շնորհն է ընդունում նորանից. իսկ ծերունին տիրասէր ու անձնուէր Բաբկէնն է, որ զիշեր ցերեկ անքուն հսկում է իւր երիտասարդ տիրոջ վրայ: Թորոսը այն միւսնոյն Ղևոնի որդին է, որ պատմութիւնը կարծիք բայց որոշ բառերով նկարագրում է և որ Ալիշանը իւր բանաստեղծական հմուտ գրչով լուսաբանել է, «խոհեմ և զգօն, և ի կռիւս յաջողաձեռն, տեսովն թխամորթ, երկայն և գեղեցիկ, ահարկու և զանգրահեր, և լի ամենայն շնորհօք» ²⁾: Միայն մեր հեղինակը առաջին տեսութեան ժամանակ ներկայացնում է նորան իբրև մի երիտասարդ որ իւր հասակից բարձր խոհեմութեամբ և զգուշաւորութեամբ աշխատում է ծածկել իւր բնական և բարոյական արժանաւորութիւնները: Գծբաղդութեան դպրոցի մէջ կըրթուած, հօր ու եղբօր աղետալի մահուան ականատես եղած և նոցա օրինակից ու սխալներից խրատուած Թորոսը ստիպվում է բուրովին «ապուշ» ձևանալ, որ իւր ազգի ու ցեղի թշնամիների սըրտում որ և է կասկած չյարուցանէ: Նա ամէն բան դիտում ու լը-

¹⁾ Տես Հ. Ղ. Ալիշանի «Շնորհալի և պարագայ իւր» գործը, եր. 286—327.

²⁾ Մարատ պատմագիր:

սում է, բայց այնպէս է ձևանում իբրև թէ ոչինչ չէ տեսնում կամ լսում: Իւր խօսակիցներին կցկտուր ու անտարբեր պատասխաններ է տալիս առանց երբէք երեսներին նայելու: Իւր զօրաւոր ու ջրդուտ կազմուածքը, իւր սրտի դաղտնիքները, հայութեան դարևոր թշնամիների դէմ զգացած ատելութիւնը վարագուրելու համար՝ նա աշխատում է թոյլ ու անհոգ երևիլ: «միայն երկու յօնից խորհրդածութեան ուղիղ գիծը կրնար մատնել թէ այս պարզութեան տակ խորին խորհուրդներ կը ծածկուէին»: Իսկ երբ ազնուական յոյն օրիորդի խնամքով պատրաստուած խորհրդաւոր բնակարանը ոտք է կոխում, այն ժամանակ թորոսը իւր սրտին կատարեալ ազատութիւն է տալիս: Երկար ու սրտաշարժ մենախօսութեան մէջ նա հաղորդում է մեզ իւր քաղաքական հայեացքները, իւր ըզներն ու ձրգտումները: Այստեղ նա երևում է մեզ ոչ ինչպէս Անդրոնիկոս հեզնօրէն ներկայացրել էր նորան բիւզանդացի պալատականներին՝ իբրև «առիւծի վիժած», այլ ինչպէս պատմութիւնն է նկարագրում իբրև կատարեալ դիւցազն, առիւծի պէս անվեհեր և արծուի նման սրբատես, անյողդող իւր հայրենասիրութեան ինչպէս և յունաց դէմ զգացած արդարացի ատելութեան մէջ, վերջապէս վստահ իւր ապագայ բաղդի վրայ, չնայելով որ ինքը անոգնական՝ հայութեան թշնամիներից շրջապատած է, և այնպիսի ժամանակ է ապրում երբ իւր կարծիքով «հայ մը չիկայ աշխարհքիս վրայ որ հայուն անկախութիւնը և ազատութիւնը մտածէ»:

Թորոսի ազատութեան գործի մէջ մեծ դեր է խաղում Եւփիմէ յոյն օրիորդը, որին հեղինակը իւր հերոսի սիրոյ ու լծակցութեան արժանի անելու համար՝ մօր կողմից հայ է ներկայացնում: Եւփիմէն նախ հօրից և ապա մօրից որբ մնալով, իւր հօր խոհական ու գիտնական բարեկամի՝ ծերունի Գիոնիս բժշկի խնամքին ու դաստիարակութեանը յանձնուեցաւ: Փոքր հասակից մայրական կաթի հետ սովորել էր նա հայութիւնը սիրել, և երբ հասակն առաւ ոչ այնքան յոյն ազնուականի դուստր էր նկատում իրան, որքան Արծրունեաց տան շառաւիղ, որից սերվում էր իւր մայրը: Այսպիսի գաղափարներով սոգորուած Եւփիմէն չէր կարող ախորժիլ սնապարձ ու պճնասէր յոյն երիտասարդների ընկերութիւնից: Նորա սիրտը գրաւել էր Ղևոնի անդրանիկ որդին գժբաղդ Ռուբէնը: Բայց երբ Ռուբէնը անգթաբար աչքերից զրկվում ու սպանվում է, Եւփիմէն նորա համար զգացած բուռն սէրը թորոսի վրայ է փոխում: Մենք իհարկէ

չէինք կարող պահանջել հեղինակից Նւփիմէի առաջին սիրոյ մանրամասն բացատրութիւնը, որովհետեւ Ռուբէնը միայն հարեանցօրէն յիշվում է վիպասանութեան մէջ. բայց դորա փոխարէն իրաւունք ունէինք սպասելու որ աւելի որոշ կերպով ցոյց տրուէր մեզ թէ ինչպէս սկսաւ ու զարգացաւ նորա երկրորդ սէրը, քանի որ նա թորոսին միայն հեւուից տեսած և նորա հետ ծանօթացած չէր: Արդեօք թորոսի իւր եղբօր հետ ունեցած արտաքին նմանութիւնը բաւական հիմն կարող է համարուիլ երկու սիրահարների փոխադարձ սէրը բացազրելու, ինչպէս որ անում է պատուելի հեղինակը: Բացի սորանից, մեզ այնքան բնական չէ երևում թորոսին առաջին տեսութեան ժամանակ Նւփիմէի առաջ ծնկաչոք տեսնել և ձեռաց համբոյրներ տալ նորան: Այս վիպական և չափազանց գորովական (Sentimental) դրութիւնը յիշեցնում է մեզ մի կարգի վիպասանութիւններ, որոնք երբեմն այնպիսի անյազ ցանկութեամբ կարդացվում էին արեւմտեան ազգերի մէջ:

Գրանք այժմ Բաբկէնին, որ մեր կարծիքով վիպասանութեան ամենագեղեցիկ անձնաւորութիւնն է: Բաբկէնը յայտնի պատմական անձն չէ, այլ բանաստեղծի երեակայութեան կատարեալ ծնունդ, նորա սիրած ու գգուած իդէալը: Միւս անձնաւորութիւնները մեծ մասամբ պատմութիւնից առնուած և նորագոյն հետազօտութիւններով լուսաւորուած լինելով՝ բնականաբար հեղինակին աւելի դիւրին էր նկարագրել, ուրեմն և չեն կարող լիուրի գաղափար տալ մեզ նորա տաղանդի բնաւորութեան ու զօրութեան վրայ. իսկ Բաբկէնը, ինչպէս և մի քանի ուրիշ երկրորդական անձինք, բոլորովին բանաստեղծի վրձինին է պատկանում, և այս նորանով աւելի սիրելի է մեզ խոստովանել, որ յիշեալ անձնաւորութիւնը մի կատարեալ տիպար է, որի նկարագրութեան մէջ մի սխալ զիծ չես նշմարում, մի անձն որ միշտ հաւատարիմ է ինքն իրան, որի խօսքերի ու զործողութիւնների մէջ և ոչ մի հակասութիւն չես կարող նշմարել: Այս է պատճառը որ ամբողջ վիպասանութեան մէջ ոչ մի անձնաւորութիւն, նոյն իսկ թորոսը, այնպէս կենդանի կերպով չէ ներկայանում մեզ ինչպէս Բաբկէնը. զգում ես որ առաջդ մի իրական անձն է կանգնած, տեսնում, շօշափում ես նորան, հաւատում ես նորա զգացմունքներին ու ձգտումներին, ամենամեծ համակրութեամբ հետևում ես նորա՝ գործողութիւններին, վասն զի համոզուած ես թէ ինչ որ հայրենասէր ու տիրասէր Բաբկէնը խորհում ու խօսում է,

նոյնը պատրաստ է նա և գործել: Նոյն խակ վիպասանութեան ընթերցումից յետոյ Բարկէնը շարունակում է երևիլ մեզ, այնքան խոր տպաւորուեցաւ նա մեր յիշութեան մէջ:

Ահա ինչպէս է նկարագրում նորան հեղինակը վիպասանութեան առաջին գլուխներին մէկի մէջ:

«Բարկէն՝ թէպէտ հազիւ թէ պարզ կարգալ և անուճը ստորագրել միայն զիտէր, արտաքոյ կարգի խոհուն, անհամեմատ ուժով, տոկուն և անխոնջ պատերազմի մէջ, անդրդուելի, հաւատարիմ և նախանձայոյզ ազգասէր մարդ մ' էր: Թորոսի և Լեոնի յաջողութեանց անթոյլ գործակից, և առաջինին պաշտող՝ յիշատակին երկրպագու կրօնամոլ, միտք դրած էր որ եթէ Թորոս երկայն ապրէր անտարակոյս Նիլիկիոյ անկախութիւնը ան ողորմելի վիճակը չէր ընկնէր. ուստի Լեոն իրեն համար աննման քաջակորով երիտասարդ մ' էր զուրկ անխորագիտութենէն և նախատեսութենէն որ իշխանի մը և զօրավարի առաջին յատկութիւնքն են: Բայց որովհետև հաւատարմութեան մէջ անդրդուելի էր, խնդրեց Լեոնի ծառայութեան մէջ մտնել և նորա գերութեան անբաժանելի ընկեր եղաւ. բանդի մէջ երկրորդական անձինք էին իրեն համար Լեոն ալ՝ Ռուբէն ալ. ամենքը երկու եղբայր նման կը գտնէին իրարու, ինք Թորոսի և իր եղբօր մէջ անբաւ հեռաւորութիւն կը գտնէր: «Ռուբէն, կ'ըսէր, հօրը ճիշդ զաւակն է, ուժով, թեթևամիտ, քաջ մինչև ի յանդգնութիւն և ի հրաշագործութիւն ծանր վտանգի մէջ, որ կրնան զինք երբեմն ի յուսահատութիւն տանիլ. բայց պզտիկը, ո՛հ, իր զուխը երբէք պիտի չկորսնցնէ, իր հօրեղբօրը պէս պիտի լինի անյոյս վիճակներու մէջ անխուով և հնարագէտ»: Ուստի Թորոս իր հայրենասէր յոյսերուն զաւակն էր:

«Ոչ Ռուբէնի աչազրաւութիւնը և մահը և ոչ Լեոնի վախճանը՝ որ զինք տխրեցուցեր և դառնացուցեր էին, կարելի էր բաղդատել Թորոսի փոքրիկ մէկ հիւանդութեան հետ, ուր Բարկէն ինք զինք կը մոռնար, սլ պարտաւորութիւնը չէր՝ որ անքուն կը հսկէր պատանուոյն սնարին քով, այլ գորովագութ մօր մը աչալրջութիւնն էր. մինչև իր խոշոր և հաստ ձայնը զայլայլիկ մը առնուլ կը ձևանար և կը փափկանար, թէ որ կարելի ըլլար իր ահագին ձեռքերը նաև պիտի մանրանային երբ տեղին սկահակը իրեն կ'երկնցնէր. սյնշափ խնամք կը տանէր զինքը խնամելու և տածելու ժամանակ»:

Այս հաւատարմութեան ու սիրասիրութեան հետ՝ Բարկէնը իւր պարզ ու անկեղծ հայրենասիրութեան մէջ մինչև գիւցազնութիւնն է հասնում: Երբ Թորոսը բանտից ազատուելուց յետոյ ուղարկում է նորան Ասասնդնուպօլսի փողոցների մէջ մի պտոյտ անել, որ գուցէ մի հաւատարիմ հայից կարողանայ Նիլիկիայի վրայ տեղեկութիւններ առնել, հայրենասէր Բարկէնի սիրաւ այնքան վշտանում է

իւր ազգակիցների կրած հալածանքն ու չարչարանքը իմանալով, որ բերանը չէ բացվում իւր կնոջ ու որդոց վրայ մի բան հարցնելու. «Ե՛ր լեռները հարցուցի, մեր ազգին ընդհանուր վիճակը հարցուցի... իմիններս ամչց այ հարցնելու՝ վախցայ հարցնելու... ո՞վ գիտէ ինչ եղան. ո՞ղջ են, մեռած են, ո՞ւր են...: Բնական է ուրեմն որ իւր ազգի փրկութեան վրայ գիշեր ցերեկ մտածող Բաբկէնը երկիւղի մէջ ընկնէր, կասկածելով որ մի գուցէ Թորոսը սիրոյ ցանցերն ընկած՝ իւր պարտքն ու ուխտը մոռանայ: «Թէ որ այդ կինը այս քաղաքը ձգէ քեզի հետ գայ, իր նզով հաւատքը թողու, Լուսաւորչի հաւտայ, ասում է նա իւր տիրոջը, մենք անիկայ մեր լեռներու թափուհի կ'ընենք. բայց հոռոմ կինը անիծած է. դու ալ մեր իշխանը՝ լաւ ես, խելօք ես, գիտուն ես, շատ կարգացող ես, վարդապետի չափ բան գիտես, բայց կնիկ տեսած չունիս, վախեմ որ ինչպէս մեր հայու գրքերը մոռցար ու վանքին բանտը հոռոմի գիրքերը կը կարդայիր, մեր կնիկներն ալ չմոռնաս այդ հոռոմին կնկան համար»: Եւ փոքր ինչ յետոյ՝ «Աստուած պահէ հոռոմի մը նիզակակցութենէն, ըսաւ ծերուկն, երեսը խաչակնքելով, հարցու այդ փրանկներուն թէ ի՞նչ վաստակ ըզին ատոնց օգնութենէն... սա փրանկները ուժով են, քաջ են, լաւ բազուկ ունին, բայց գլուխնին դատարկ է, խելք չունին. սա Հոռոմք հակառակն են, ուժ չունին բայց շատ զիտեն, խորը կը տեսնեն. նայէ՛ ատոնց տէրտէրներուն աչքին, դժոխքի ծրագ կը նմանի, գիտես թէ սասանան մէջը կը պլպլայ: Ես սա գիշերուընէ ի վեր հոռոմ մարդկանցմէ աւելի կնիկներէն կը վախնամ»: Բաբկէնի այս յունատեցութիւնը սնտոփ նախապաշարմունք չէ, այլ երկաթ գարերի ընթացքում կազմուած և հայ ժողովրդի մէջ արմատացած կրօնական ու ազգային ատելութիւն է, որից եթէ Բաբկէնը անպատ լինէր, նորա բնաւորութիւնը այն ամբողջութիւնը չէր ունենալ որ տալիս է նորան այս յատկանիշ գիծը:

Վիպասանութեան միւս անձնաւորութիւնների վրայ երկար չենք կանգնիլ. կասենք միայն որ նոցանից իւրաքանչիւրը հայ ազգի զանազան դասերն է ներկայացնում՝ ամէն մէկը իւր գաղափարներով ու ձգտումներով: Այսպէս, եթէ Թորոսը խոհեմ, քաջ ու հայրենասէր իշխանի կատարելատիպն է ներկայացնում, եթէ Բաբկէնը ժողովրդի միջին դասն է պատկերացնում իւր բոլոր արժանաւորութիւններով ու պակասութիւններով, Օշին Լամբրոնի տէրը և Աբաատ Պապեռոնի տէրը յիշեցնում են մեզ այն ազնուականութիւնը որ ազ-

գային օգուար թողած լոկ իւր շահերի վրայ է մտածում, ՄԼԵՏՐ—
այն սանձարձակ իշխանագուհիներին՝ որոնք միայն իրանց կրքերը յա-
գեցնելու ետև ից են լինում, Սմբատի դուստրը Մարգարիտ—այն առա-
քինի ու բարեգուհի իշխանուհիներին՝ որոնց օրինակը սալխս են մեզ
ժամանակով մերձաւոր, Խոսրովանոցը և Կատրամիտէ թագուհիները:

Երկար կը լինէր նոյնպէս մի առ մի թուել վիպասանութեան
մասնաւոր զեղեցկութիւնները, այն պատմական խորհրդածութիւն-
ները, ողջամիտ դատողութիւնները և սուր ակնարկութիւնները, որոն-
ցով բազմափորձ հեղինակը զարդարել է իւր գրքի էջերը, և որոնց
ճաշակն առնելու համար պէտք է նոյն իսկ վիպասանութիւնը կարդալ:
Մեզ՝ որ հեղինակի հետ անձամբ ծանօթ լինելու պատիւն ունինք,
զարմացնում է մանաւանդ այն վառվռուն երեակայութիւնը, այն
հրատապ հոգին, այն աշխոյժն ու եռանդը որ սովորաբար երիտա-
սարդական հասակի մասն ու բաժին են և որ նա իւր հասուն հա-
սակի մէջ կարողացել է պահպանել: Այս արժանաւորութիւնները
ինկատի ունենալով, մենք կարող ենք միայն ցաւիլ որ հեղինակը
այդպէս ուշ է մտածել իւր բեղմնաւոր գրիչը վիպասանութեանը
նուիրելու, և այն պատմական վիպասանութեանը՝ որ եթէ մէկ կող-
մից ընթերցասիրութեան եռանդն է արծարծում, միւս կողմից զօրա-
ւոր կերպով նարսնում է ազգային պատմութիւնը մշակելու ու ժո-
ղովրդացնելու, որի կարիքը այնքան զգալի է մանաւանդ մեզանում:
Եթէ մի նկատողութիւն կարելի է անել ամբողջի վերաբերմամբ, այն
է որ, մեր կարծիքով, վիպասանութեան առաջին մասը աւելի լաւ է
մշակուած քան վերջինը. սկզբնական պատկերների գործած տպաւո-
րութիւնը թուլանում է թորոսի Կիպրոս կղզին դուրս գալուց յետոյ,
երբ հեղինակը վիպական ընթացքը թողած՝ համարեա պատմու-
թեան շրջանի մէջ է սահմանափակվում: